

զանէ գազանի մը կամ թշնամոյ մը դա-
լուստը:

Շարայարելի



ԳՐԱԿՈՍԱԿԱՆ ԱԿՆԱԲԿՆԵՐ

1. Լումայի, գրական հանդեկս. Ետարի,
փրց Ա., 1900, 8փղիս:

Այս զրական հանդեկս՝ որ լոյս կը տեսնէ
խմբագրութեամբ Ալր. Գիւտ քահանայ Աղա-
յեանցի, իւր ներկայ համարովն ոչ ինչ նուազ
հետաքրքրական և շահէկան նիւթ կը մա-
տակարարէ իւր ընթերցողաց: Առաջին
յօդուածը կամ գրասիժնը՝ որուն կը հան-
դիպինք, կը կրէ կեռունք խորագիրը, գրուած
և կնքուած ազգային մատենագրութեան մէջ
անուն և համբաւ վայելող վիպասան Պերճ
Պոշշանցի ստորագրութեամբ, որ արդէն մեր
կենդրոնական երկրի և ազգային հետարի
պերճ նկարագրող մ'է: Ծերոնին հեղինակն,
տարիներով առաջ (1860) իւր երիտասար-
դական աշխուժով և վառ երեւակայութեամբ
արտադրած Առ և Վ. Ռ. Ռ. ներ ընտիր վէ-
պին, ազգային վիպասանի անունը մասնա-
գած է: Իւր այդ վէպի գրողն եղած է՝
պիտարապէս Խաչատուր Արքունակ՝ յիշա-
տակաց արժանի Վեր+ Հայութանէն, որը
նոյն ատենի երիտասարդ Հեղինակին ուղոյն
ներշնչած է՝ նմանօրինակ կիսաւորութեամբ
և ոճով արտագրել այդ գրութենը: Արշափ
ալ համարինք թէ չէ հասած անոր, սակայն

այնչափ կրցած է մօտենալ, որչափ չունինք
մէկը որ մօտեցած ըլլայ: Յիրագի, Բաֆֆիի
վիպասանութիւնները, ինչպէս Սահման, և
այլն, ընտիր նն և ոգեվառ, սակայն ու-
րիշ միտք և նպատակ կը զիտենց մենց ա-
նոնց մէջ, ուրիշ Արովեանի և Պոօշեանցի.
ասանց միակ նպատակն եղած է ի միջի
այլց, նկարագրել ազգագրական տեսակի-
տով, հայ ժողովուրոգին մէջ տարրացած՝ ինչ-
պէս եկամուտ, նոյնպէս և ինցնուրոյն ազ-
գային սեփականութիւններն և ծէսերն. զծա-
զրել անոնց արտաքին և առանին կեանքի
պատկերը՝ իրենց բնորոշ յատկութեամբն,
և տեղական բարբառ՝ իրենց իսկասիպ
դարձուածքներով, ոճերով, ասացուածներով
և բառերով:

Այստեղ, մենք բնաւ զիտաւորութիւն չու-
նինք քննականիկու Պոօշեանցի, Արովեանի
և կամ Տաֆֆիի վեպերը, ուստի միայն եր-
կու բառով ընթերցողին առջն զներով վե-
րացիշեալ կեռունքի բովանդակութիւնը, կու-
զնք հարեւանցի ակնարկ մը տալ Լումայի
մէջ լոյս տեսած՝ զիտաւորապէս ազգային յօ-
դուածներու վիայ: Կեռունքը ազգագրական
պատկեր մ'է, հայ գեղջուկի տանը մէջ նո-
րածին երեխայի մը համար կատարուած
հանդիսից, ծիսակատարութեանց և տեղա-
կան մասնական սովորութեանց. Պոօշեանց՝
իրեւ հանդիսակից և ականատես կը նկա-
րագէ, և կամ լաւ եւս ըսել՝ կը լուսանը-
կարէ՝ ըսա իւր սեփական ոճայն: Կան հե-
ղինակներ՝ որոց միայն անունն ախործ կ'ազ-
գն ընթերցողին՝ կարգալ իւր գրուածը,
և անշոշտ չպիտի խաբուինք, եթէ այս հե-
ղինակաց կարզը զասենք նաեւ ծերունի վի-
պասանը. և թէպէտեւ չսնենայ վերջնն վէպս,
նորա երիտասարդական հասակի մէջ գրած
և հրատարակած վէպերուն կորովս ու ողին,
ի վերայ այսր ամենայնի, իւր այս «այլարա-
նութեան» մէջ իսկ, ինչպէս ինըն կը կոչէ,
կայ օծում մը, ինքնուրոյն տիպ մը, որ ոչ
երրեց ձանձրայթ կը պատճառէ ընթերցողին:
Երկրորդ յօդուածը՝ որ գրաւած է Լումայի
37-ց 59 էջերը, Մ. Նալբանդականցի անտիպ
և նորագիւտ գրուածը մը կը պատճառէ.

Սահմանական Արքական
Վարչն ուսանաւոր: Գրեց Հ. Ա.
ՎաԶԻԿԵԱՆ տպ. Վենետիկ Ս. Ղազար 1900:

ԳԻՒՆ Է 50 ՍԱՆԴ:

և է իրկու հատուած աշխարհաբար քերաւ կանոքրեան ներածոքիմից: Սոյն գրուած քը՝ որ չորդին Պր. Եր. Շահազիկեանի առաջին անգամ լցու կը տեսէ, « Հանգու ցեալի հատուկտօր թերթերից » հանուած են: Հրատարակչի ասելով՝ քերականութիւնն կրիին մասերէ կազմուած է, այսինքն՝ բուն Քերականուքրիմ¹, « որը հանգուցեալը հասցրած է եղել մինչեւ բայերը, և ընզարձակ ներածոքրիմ՝ որ վերացրած է եղել »: Այս տեղ հրատարակուածը, ներածութեան վեցերորդ զուփիք կը ներկայացնէ, հետեւաբար նախընթաց հինգ զուփիները կորուուած են: Բովանդակութեան մասին այսշափ միայն կ'ուզենը բաել, որ շատ անգամ ըսուած և կրկնուած ինչիններ են որ հոն կը յուզուին: ապինքն, թէ « Պէտք է թողու լինչ որ հին է, ինչ որ մեռած. և թէն նոր լիզուի մշակութիւնը չէ կարելի առաջ տանիւ ստրկանալով հին լիզուի ոգոնն և ազգեցութեան », և այս: Միով բանի ճարտասանական բաւական զօրաւոր ջատագոլութիւն մ'է հայ աշխարհաբար լիզուին, և չափազանց պարսու՝ զրաբարին: Սակայն ներուի մեզ ըսել, — որ առանց ուրանալյու նաեւ մողովրական լիզուի բառերը եւ զարձուածքները, — եթէ զրաբարը լինէր, իւր ճոփի զայշարովն և կանսաւոր քերականութեամբն, կրնայինք մենք այսօր բարելնեան ամէն լիզուով խօսիլ ու զրել, բայց ոչ այժմեան աշխարհաբարը քիչ շատ կարգաւոր լիզուով. Նոյն իսկ՝ մեր ամենէն աւելի տաք աշխարհաբարեանները, որպիսին եր նաեւ նալբանաեանց, ճանչցած են անոր օգտակարութիւնը, և լուկեայն իսկ օգտուած անկէ. ըսածիս ստուգութիւնը փաստի կամ բացարարութիւն չունի, բաւական է միայն աչք մը տալ ասկէց յիսուն-վաթսուն տարի առաջ խօսուած և զրուած լիզուին, թէ ի ոսւխա և թէ ի թօւրքիա:

65-ց 194 Էջերը նուքրուած են Մկրտիչ Յովսէկիեան իմինի կենաց և զործունէու-

թեան: Պր. Եր. Շահազիկեան՝ որ է կեղինակ գրութեանս, « երկը ամբողջ տարի աշակերտած մինելով, կ'ըսէ, ապիթ ենք ու նեցել բաւականացուցիչ կերպով ճանաչելու, ժանօթանալու նորա կեանքի պայմաններին, նորա գրական ու մանկավարժական զործունէութեան, և ըստ արժանույն գնահատելու »: Ստոյդ է թէ, մինչեւ ցայցմ՝ պարբերական թերթերու մէջ ցրի հրատարակուած հատուկտօր տեղեկութիւնները գոհացուցիչ լինելով, Պր. Շահազիկեանի սոյն գրութիւնը՝ իւր ինչ ինչ նորութիւններովն, ապագային մէջ ճոփի պարունակութեամբ հրատարակուել միք հատորի մը թերին մասամբ իւրի լրացրնելու օգտակարութիւնն պիտի ունենայ: Գրութիւնս այլ և այլ զուփներու բաժնուած է և զեռ շարականի լինուած լինուած լինուած կերպութիւն և լուր զիսոյն մէջ, ուր կը յշշատակուին նախուցեալի թէ ինքնաշուր և թէ թէ թարգմանածոյ բոլոր երկասիրութիւնները, ի միջի այլոց ուշազրութեան արժանի կը համարուին նորենացուց, Շարականաց, Լամբրունացուց և Որձանազութեանց թարգմանութիւնները. և կը շեշտուի զիսաւորապէս Շարականաց թարգմանութիւնը, յորում մեծ յաջողութիւն ունեցած է կեղինակն: Սոյն ձեռնարկի յաջողութիւնն է հարկ է պահանջում է, կ'ըսէ բացի զրաբարի լաւ իմանալուց, բացի հակիմին, բանաստեղծական պատկերներով և նմանութիւններով ինօղուած ոները և զարձուածները հասկանալու ընդունակութիւնից, և աստուածաբանական թէ հայերէն և թէ ուսւերէն զիսութիւն: Այստեղ խոսափանելով հանգերձ զիսանական իմինի մեծ ընդունակութիւնը և տաղանդը, շենք կարող ուրանալ կամ շյիշել նաեւ, որ այլ թարգմանութեան յաջողութիւնն ի մասին աստուածաբանական հասկացութեան և գիտութեան, կը պարտի Աւետիքեան չ. Փարբիկ վարդապետի Բացուրունիւն Շաբանաց² հմաւլից աշխատաօիրութեան. զան զի այլ է նիւթական թարգմանութիւնը, և այլ է անցա

1. Անշուշտ նոյն ըլլալու է Մ. Միանաւեանցի յշշատակած Ակիզբ քերականուքրեան

աշխարհաբար լիզուի հետ:

2. Տպ. և Աւնեաբէկ 1814:

(շարտականաց) միտքն ըմբռնելը, ներքին խորհուգով հասկանալը, նոցա վերլուծելը, մեկնելը բացատրելը»։ և ահա յայսմ մասին՝ կը կարծենք որ իրեն մեծ թիկոնը եղած է մեր աստուածաբան վարդապետի վերոյիշեալ ընտիր երկասիրութիւնը։

Բաղէլ և իշր շրջակայքը։ 1884ին ներկու պատրիարքի հրամանով կազմաձած վիճակագրական տեղեկագիր մ'է։ Գրաւածքս թէ և համառօտ է բայց ոչ զուրկ ի կարեւորաց. գասն զի՞ նոյն իսկ ամենափոքր գիւղորէից, նոցա բնակաց, կրթական հաստատութեանց, եկեղեցեաց և այլն, նկարագիրն և թուահամարն կը ներկայացնէ մեզ, որոնք բաց ի մասնական օգտակարութենէն՝ նաև հետաքրքրականց են։ Ցանկալի էր՝ որ իդէ ոչ ամէն տարի, գտնէ հնագ տարին անզամ մը, ձեռնհաս անձանց միջոցաւ պատրաստուէին այսպիսի տեղեկագիրներ և հրատարակուէին։ որով բնաշխարէէ տարագիրը, կարող կը լինէին ստոյդ տեղեկութիւն մ'ունալալ, իրենց սրտի մօտիկ, աչքէ հեռու և այնքան սիրելի վայրաց վրայ։

Հեյց և նորից հնախուզական ուղեւորութիւնն, գրուած է Լուսայի խմբագրէն, յորում կը նկարագրէ իւր այցելած վայրերը, վանքերը և եկեղեցիները. ի գրի կ'առնու հանդիպած արձանագրութիւնները և մի քանի ձեռագրաց յիշատակարանները, կը յիշատակէ նաև այս կամ այնտեղ գտնուած հանքերը։ Այս անզամ ստորագրուած զիլաւոր վայրերն են լիստալայի Ա. Աստուածածին հինաւուրց վանըը, Հաղբատ և Սանահին, Արգուի գիւղը և Յոհան Օձնեցւոյ վանըը. գրութիւնը շարունակելի է։

Պատմական թաճին մէջ տպուած են քանի մը կտոր բնորինակութիւններ, հանուած էջմիածնի Գրշագրաց մատենագրաբանն։ Ասոնցմէ առաջինները քաղուած են Եփրեմ կաթողիկոսի հանդակներն և կը վերսրբերին Ղարաբաղի, Նախիջևանի և Շամշաշեու Մելիքերուան. իսկ երկու վերջինները՝ որոց մին կը կտէ լեռնե քաղաքորի

տոնմը խորագիրը, իսկ միւսն որ է Ռուրիինան տոնմը, գրուած է 1849 թուականին Միքայէլ կաթողիկոսն (Սոյ)։ Կայ նաև չ. Յ. Զոհրաբեանի մէկ թղթին օրինակութիւնը։ Ըստ մեր տեսութեան, տասնց մէջ մեծ նորութիւնն մը կամ օկտակարութիւնն մը չենք գտներ, նկատմամբ ազգային միջին և նոր պատմութեան։

Իսկ Թուղրն Աանկայ արծրունույ առ Մովսէս Խորենացի, և պատախանին, երկրորդ Խմբագրութիւնն մը կարծելու չափ մեծ տարբերութիւնն մը չեն ներկայացներ մեզ, սակայն և այնպէս ունին իրենց օգտակարութիւնը, Խորենացւոյ նման հեղինակաւոր անձի մը գրութեան բազդատական հրատարակութեան համար։

Մատենախոսական բաժնին մէջ Ա. Տէր Միքելիան՝ Խորենացին բննադատորեան մէջ խորագրի ներբեւ, համառօտ տեսութիւն մը կ'ընէ վերջերս լոյս տեսած երկու հետաքրքրական գրքոյկներու վրայ. ասոնց առաջինն Ստ. Մայնասեանցի Աւելուն պատմութիւնը և Մայուն Խորենացին մատենագրական ուսումնասիրութիւնն է, որոյ վրայ կանխապէս խօսուած է նաև Բագմակիսի մէջ¹։ Իսկ երկրորդի՝ Բարգույղիմու վարդապետ Գէորգեանի Խորենացով Խորենացով ուրութ է հասունալ։ Այս երկու գրութիւններ եւս, իրարմէ տարբեր շափկներով մի և նոյն նպատակին կը զիմեն. այն է, մեր չափազանց խօրծեալ և մերթ անարդար կերպով դատափետուած ու անուանարկուած Քերգուղահօր դատին պաշտպան հանդիսանալ, որուն համամիտ կը ցուցնէ ինքինցն՝ Գրախօսն՝ Ա. Տէր Միքելիան։

Ուշագրաւ յօդուած մ'է նաև Ժամանակագրութիւն գործոց Վարդանանց՝ ըստ Եղիշէի և Ղաղարայ փարպեցւոյ. Յօդուածագիրն՝ որ Օ տառով կը ներկայանայ մեզ, համեմատելով երկու պատմաց քով եւս յիշատակուած քանի մը կարեւոր դիպաց տարբերուերն, ըստ կարի աջող կերպով կը լուսաբանէ զանոնը։ Թուի թէ իրեն անծանօթ է Խորենացաւութիւնն Եղիշէ դպրուանիւան վրա²,

բանասիրական պրուտածքը, յորում հեղինակն արգել փոքր ի շատ բացատրած և մեկնած էր յիշեալ կէտերն: Բաղդատելով մին միւսին հետ՝ ուրեք ուրեք կը տեսնենք տարբերութիւններ՝ որ քննութեան կը կարուին:

Լումայի այս զրբին կցուած է իր յաւելուած՝ կանոնք Ս. Ժառավոր և Ալոյր Հարց եկեղեցոյ, յայտնի և զրչագրաց մէջ յաճախ հանդիպուած պրութիւնը: Այս գրուածքը՝ ըստ ի՞ւ բոլորովին աւելորդ էր Լումայի Ծերը գրաւելու. լաւագյին կը լինէր առանց բնազրի հրատարակութեան, նորա «Յառաջաբանն ու Կարեւոր ծանօթութիւնները» տպագրել միայն, զոր կը խոստանայ ամբողջ տպագրութիւնը աւարտելն յիտոյ ընել:

Ինչպէս ի սկզբան ըստինք, մենք զիխաւորապէս ազգային մատենագրութեան նիւթեր պարունակող յօդուածները յիշեցինք. կան ուրիշ քանի մը հատուածներ եւս, որոնց կարեի էր ի կարգին յիշատակել, բայց տեղույ սղութեան պատճառաւ ստիպուեցանք զանց ընել:

Հ. Ն. ՏԱՅԱՅԻ

2. 1900ի ընդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի: Տօմար: Զանազան գիտելիքներ, վիճակաբարական տեղեկութիւններ: Պոլիտ. տպ. Ցէր Մինասան: Գինն 8 դր.

Գիրը մ'է ճոխ բունդակութեամբ, կը բարկանայ միջամբ, ուժածալ 28 թերթերէ և 366էն աւելի Ծերք: Տպագրութիւնը ընտիր:

Օրացոյցը երեք թերթի մէջ ամփոփուած է և ըստ Հ. Ա. Ա սա քաղուած է Մարտուգէ Ա. Յովսիկեանի պատրաստածէն: Մանօթ տումարներու բովանդակութիւնն ունի և անոնց մէ աւելի մեծազիր ըլլալով, աւելի դիրքն թեռնի է: — Օրացոյցին ամենէն հետաքրքրականն է Զանազան գիտելիքները, որ Արեւելք լրազրի խմբազրին Պ. Հրանտ Առատուրի աշխատասիրութիւնն է: Պ. Հեղինակը իր գործին սկիզբը դրած է համառու յառաջաբան մը, որ կը յայտնէ իր այս գործին օճան եղած աղբիւները: 49 էջերու մէջ հրատարակած է կրթական և ե-

կեղեցական հաստատութեանց ո՛ր թուականին հաստատուիլին, զբական և բարերար անձնոց ծննդեան և մահուան թուականն, և այն: Տասուերկու տարի առաջ այսպիսի գործ մը սկսած է հրատարակելու ու կը հրատարակէ ուսուահայ ծանօթ բանասէր Գիւտ Ա. Գահ. Ազանեանց: Այս երկու նման գործերը իրար հետ համեմատելով, որոշ կը տեսնենք. որ ուսուահայ պատմութեան վերաբերեալ յիշատակութիւնը նոփի են Ազանեանցի օրացոյցին մէջ, իսկ թըրքահայ պատմութեան վերաբերեալը, Պ. Առատուրի հրատարակածին մէջ: Կարեւոր յիշատակութիւնը որը կը գտնուին Ազանեանցի տօմարին մէջ, կը պակսին ընդորձակ օրացոյցին մէջ, որը օրինակ. Սկզբ. Մշակ (1872), Արեւուտը (1859), Եփին Աշարայրի (1866),

Արեւելք (1884), Տարագ (1890), Արդիշր (1883), Արձագանք (1882), Փորձ (1876), Նոր-դրա (1888) լրագրաց: Կ. Ազնաւորան ամիրայի մահաւան թուականը կը գնէ (1853) գիւտը, 24ին, իսկ ըստ Ազանեանցի մարտ 3ին: Խմբազրի և երածիշտ ծննդեանը (1884. 23/4) չէ յիշուած: Զեն յիշուած ազգային մեծ վիպասանները և բանաստեղծները խաֆքի (1888. 25/4), Խ. Արզիկան (1848. 12/6), Պատական (1892. 22/8), Նահապետին յիշանմանը յորելեանը (1890. 13/5): Ամաթուուց և արաբեթուուց փոքր տարբերութիւններ կան այլ և այլ էջերու մէջ (էջ 45, 46, 53, 58, 70, 75, 80 և 81): Ազանեանցի գործին մէջ թէւ առատ են պատմական յիշատակութիւնը, սակայն 55էն աւելի կտրեւոր յիշատակութիւնը որ կը գտնուին ընդորձակ օրացոյցին մէջ, կը պակսին իր տօմարին: — Ժամանակի և տօմարի վրայ ընդորձակ աեղեկութիւններ կու տայ (էջ 83-144): Մանրամասն ծանօթութիւն կու տայ Ետի գուշէ ազգային հիւանդանոցին անցեալ և արզի վիճակին վրայ (էջ 142-154) ու այլ հիւանդանոցին մեծ սատարողներուն համառու կենսազրութիւնն ընելով, հրատարակած է նաեւ անոնց կենսանազրի պատկերներն: — Կը զրէ Պոլսոյ 42 հայ եկեղեցեաց համառու պատմութիւնը:

Ամփոփ տեղեկութիւն կու տայ Արմաշու զպրեզմանքի վրայ և կը յիշէ նոյն հաստա- տութեան հիմանդրէն մինչեւ ցարդ առաջ- նորդաց զործունեութիւնը (175—186): — «Ե. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի շուրջը» վերնազրով կը խօսի պատրիարքարանի զա- տավարութեան, կտակի, պատրիարքարանի հասոյթներու, նախնական (ազգային մանկար- ոյ) կրթութեան, Ղաղթիոյ կեղորնական վարժարանի, Սանառարեան վարժարանի, Խղմիրեանցի զրական մրցանակի վրայ (187— 220): Աճէն դասակարգի համար օգատակար և «Գործի մարզոց համար» վերնազրով զրու- թիւնը (220—263). Ընթերցողը զործնական կեանցի վրայ կարեւոր տեղեկութիւն կ'առ- նու. կը ծանօթանայ երկրագործական գրա- մատան, տոկոսի օրէնքին, վազքի վերա- բերեալ զիառութեանց, կարուածական տուր- ցերու, զրոշմատուրքի օրինաց, օսմաննան թղթատարութեանք Պոլսոյ օտար թղթատա- րութեան, հեռազրաց, զանազան տէրութեանց զրամիներու, ապահովագրութեան: — Նման ասոր տնտեսական կարեւոր զիսակարգութիւն մ'է «Բնոտանիիքին համար» վերնազրով ա- ռողջարանութիւնը և կերակրաբանութիւնը (264—285): Առողջարանութեան մէջ միայն մանկանց առողջապահէկ կանոններու վրայ կը խօսի. մեր համեստ կարծեօք լաւագոյն էր այս մասը՝ որ շատ ամփոփ բնուած է, ընդարձակ ըլլար և խօսէր նաեւ մարզուս առողջ ապրելու կանոններուն վրայ և տե- ղեկութիւն տար սովորական հիւանդութեանց վրայ, ցացցնելով նաեւ անոնց գեղն ու դար- մանը, ինչպէս այս տեսակ զրութիւն մը ան- պակաս է գաղղիացոց «Ալմանաք հաշիք»ին մէջ: — Հետաքրքրական են տօմարիս վեր- ջը կցուած զանազան տեղեկութիւնք, որով կը ծանօթանանց օսմաննան կայսրութեան հարստութեան, արքունեաց, նախարարաց, Պոլսոյ և զաւառաց պաշտօնիք, հրամանա- տեարաց, տարաշխարհի օսմաննան զեսպանաց, օսմաննան տէրութեան հայ աստիճանաւու- րաց, պաշտօնատեարաց, Պոլսոյ կեսպանական անձանց, և զանազան վարչութեանց: — Օ- րացոյցին ամենէն վերջին մասը կը կազմեն Հակոբով կեղեցական պաշտօնիք վրայ եղած տեղեկութիւնը (328—357): Զետեղած է Հայոց կաթողիկոսաց անուանք՝ անոնց ըն- տրութեան և մահուան թուականը: Այս ցուցակը բատ օրացոյցին հեղինակին, կաղ- մաւած է եկեղեցականի մը նորագոյն հետա- զուութեանց հետեւողութեամբ: Համառոտ տեղեկութիւն տրուած է արզի պատրիարք- ներու, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսնե- րու, Էջմիածնայ մինողի, Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի, Ամերիկայի ա- ռաջնորդաց վրայ խօսած է Պոլսոյ պատրիար- քարանի վրայ, և յիշած կրօնական և քա- րաբական մողովյ, զաւաստանական, ու- սումնական և տնտեսական խորհրդոց ան- դամները, նոյնպէս յիշած է նաեւ պազային պատրիարքարանի պաշտօնեանները: Զանց չէ ըրած յիշելու Պոլսոյ պատրիարքութեան պատկանող զաւառի առաջնորդներն և թե- մերն այ: — Գաւառներու մէջ հառատուած իրացանչիւր որբանոցներու վրայ համառու կերպով կը խօսի, կը յիշէ նաեւ Երուսա- ղեմի, Կիլիկիոյ և Աղմամարայ պատրիար- քութիւնը և անոնց ժողովական անձերն, վիճակները և թեմերը: Ազգային ընդարձակ օրացոյց ընդպարձակօրէն լուսառուցական հա- սարակութեան վրայ ճառելին յետոյ, մի մի Էջերու մէջ կը խօսի Հայ կաթողիկէ, Հայ բողոքական հասարակութեանց վրայ և զրքին ամենէն վերջը կը յիշառակէ Թուրքիյ ա- րեւելեան քրիստոնեայ հասարակութեանց հոգեւոր զոփիները և Հրէից խախամապեաը: — Ասոնց են ընդպարձակ օրացոյցին զրած նիւ- թերը: Խր աեսակին մէջ և բոլոննակած նորի նիւթերովն՝ առաջինն է, թէեւ ոչ կատարեալ, բայց գնահատելի զրոք մ'է: Օրացոյցին հե- ղինակը Խր այս զործին մէջ զրած է մի գծա- ւոր թուզզէ, որուն վրայ կը փափաքի որ ըն- թերցողը համեն օրացոյցին նկատմամբ ու- նեցած կարեւոր զիտորութիւնը զրել է ու- զարիել ազգ: հիւանդանոցին զրասենեակը: Ասիթ առնելով Պ. Հեղինակին այս հրաւե- րէն, ներկայ զրախօսականին կը կցենք մեր փոքրիկ զիտորութիւնք: Ա. յիշուած են ե- կեղեցական և քրական անձանց անուններն և անոնց մահուան տարեթիւն, այս բաւ է, բայց լաւագոյն կ'ըլլար եթէ օրացոյցին այս

պիտակարգութիւնը աւելի ընդարձակ բռնուելը
և այն իւրաքանչիւր անհանց ամէն հեղինակութիւնը յիշուէին։ Զոր օրինակ էլ 63
գրուած է « 1878 . — Սիմոն Միրայէկեան ,
քանակագէտ , ուսուցիչ և հեղինակ»։ Ի՞նչ
հեղինակութիւն ունի , ընթերցողը կը հետաքրքրուի զիտանլու։ Այսպիսի պահանջ
մը թէեւ շըլլուիր պատի օրացոյց մը , ինչ-
պէս Աղանահանցինը , բայց ներով՝ ընդարձակ
օրացոյցին սպասել , բանի որ սա ստուար
զիրը մ'է և ոչ համառոտ օրացոյց մը։ —
Բ. Այս ազգային երեւելի անձանց գոնի ա-
մենէն նշանաւորաց կենդանագիր պատկեր-
ներն եթէ հրատարակուին , զիս աւելի ժո-
ղովուրդը կը ձգուի գնելու այդ օգտակար
գործը։ — Գ. — Պոլսոյ ազգային վարժարան-
ներէն միայն Ղալաթիոյ կեղրանականին վրայ
համառոտ տեղեկութիւն կայ , իսկ միւս 40նե-
րուն՝ որոնց մի միայն վիճակարական ա-
զիտակին ներկայացուած է , լաւագոյն էր ա-
մէսուն հիմնագիրն , սկսուելու թուականն
և այն , յիշուէր։ Ես ասոնց հետ յիշուէին
նաեւ կաթուղիկէ և բողոքական հայ հասա-
րակութիւնց վարժարանները , Նյոյնպէս հա-
յարնակ գաւառուներու մէջ ամենէն նշանաւոր
վարժարաններու վրայ խօսին և անշաննե-
րուն միայն անունն յիշատակին անշուշտ
օգտակար կը լլարա : — Դ. — Լուսաւորչական
եկեղեցական և աշխարհական դասակարգին
վրայ խիստ շատ և ընդերկար տեղեկութիւն-
ներ արուած են , իսկ Հայ կաթուղիկէ և հայ
բողոքականաց վրայ չափազանց կրծատեալ
գրուած է . այս հասարակութիւնցն ալ ազ-
գին մարմէն ըլլալով , պատշաճ կ'երեւի ա-
սոնց վրայ ալ եթէ ոչ երկար , զոնի անթիրի
տեղեկութիւն մը տալ . Օրացոյց իւր պա-
րունակած նոր նիւթերուն և հատորին ստուա-
րութեան համեմատ & զրուշ արժէք մ'ունե-
նալով զիւրամատելի է զինը : Հեղինակը
ինամըզով պատրաստած է այս գործը և ան-
ցեալին հետ բազգատալով ներկայ հատոր
շատ զերազանց և հատարեալ կը զտնենք :
Ու ասոր ընթերցումը մեր համեստ կարծեօք
օգտակար և հետաքրքրական կ'երեւի թէ
ժողովրդական և թէ զրական դասակարգին :
Ընդարձակ օրացոյցս երթալով պիտի մատե-

նայ Արմանաց Հաշէրի համբաւոյն , զոր կը
մաղթենք . — Եւ անոր հետ պիտի կարե-
նայ մրցիլ , եթէ ամէն մեր հեղինակներն և
մասնագէտ զրիշներն համառոտ և հետարր-
քրական տեղեկութիւններ զետեղէին այդ
օրացոյցին մէջ որ ազգին է :

Հ. Ս. ԽՐԵՍ.

3. DR. JOSEF KARST. Historische Grammatik der Kilikisch-Armenischen. Մասն Ա. Lautlehre. — Նոր և հմտա հայագէտ Տր. Յովսէփ Քարազի կի-
լիկեան Հայերէնի քերականութեան տուշին
մասն — Զայնափիտութիւն — ամբողջութեամբ
լոյս տեսաւ այս օրերս Ծնող մամլով է նաեւ
երկրորդ մասը — Ձեւազիտութիւն — (For-
menlehre կամ Morphologie) որ ազնի
Հեղինակին մեզ զրածին համեմատ , Sera
ու peu plus intéressante que la pre-
mière .

Որովհետեւ յաջորդ Պրակով պիտի սկսնք
իւսկատար թարգմանութիւն մ'ընծայել սոյն
օգտաշատ և հմտա գործոյն , աւելորդ կը
համարինք հոս ընդարձակ տեսութիւններ
ընել անոր վրայ : Կը գոհանանց առ այժմ
այսափ միայն ծանուցանելով մեր ընթեր-
ցողաց , որ Տր. Քարազ իւր արդէն հրատա-
րակած Թիսեին վրայ (էջ 74 . և 80) ա-
ւեցուցած է գրեթէ 40 էջ (75-142) , և
այսպէս լրացուցած է բուն հայնագիտու-
թիւնը , ընդարձակ տեսութիւն մ'ընկերով բա-
զաձայն գրոց վրայ : Էջն կը սկսի ստու-
գաբանական հմտա յաւելուած մը Զովա-
գրական Զայնափիտութեան (Kombinatoris-
cher Lautwandel) վրայ :



ՀԱՅՈՒՅՍ ՀԱՅՈՒՅՍԱԳՑ

ԱՐՏԱՎԱՀՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔ . — Ամերիկայի մէջ ներկային
երկու թերթ կը հրատարակուին . «Հայրե-
նիք» և «Հայեն հայրենաց» . Երկուքն ալ
անուամբ և ողջութեամբ իրարմէ քիչ կը